ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Անդրադարձ կապը տարրական դասարաններիՄայրենիի դասագործընթացում

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Հովսեփյան Սուսաննա Ռուբիկի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Հարթաշենի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
2. Անդրադարձ կապը և այլ գիտությունների օգտագործումը ուսուցման գործընթացում…….. 5
3. Այլ գիտությունների տվյալների օգտագործումը ուսուցման գործընթացում……... 7
4. Միջառարկայական կապերի դրսևորումները տարրական դասարանների մայրենի լեզվի դասերին……...…11
5. Եզրակացություններ……..15
6. Օգտագործած գրականության ցանկ……...16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը: Կրթական համակարգում կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացման: Կրթական գործընթացը պետք է կառուցել այնպես, որ նպաստի երեխաների մտածողության զարգացմանը, անհրաժեշտ գիտելիքների որոնման ու կիրառմանը: Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցման գործընթացում անդրադարձ կապերի կիրառումից:

Եթե միջառարկայական կապերը հեշտ ու տեղին, չափավոր ու նպատակային չօգտագործվեն, ակամա դրանք կարող են դասագործընթացի հիմնական մեխը դառնալ և դասի բուն նպատակը մղել երկրորդ պլանի վրա, դարձնել անկարևոր: Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք ու ելակետ է: Հետևաբար, երեխաներին շրջապատի աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռող նշանակություն ունի երեխաների աշխարհաճանաչողության համար:

Հետազոտության թեման արդիական է, քանի որ խոսել դասավանդման գործընթացում ամեն օր ուսումնասիրվող առանձին նյութերի միջև փոխադարձ կապերի ապահովման մեթոդական ձևերի ու եղանակների մասին, այդ նշանակում է կոնկրետ օրինակների վրա ցույց տալ, թե ինչպե՞ս, ի՞նչ ձևերով ու հնարներով պետք է իրականացնել անդրադարձ կապի պահանջը, ինչո՞վ այն կնպաստի նոր նյութի խորն ու կայուն յուրացմանը, գիտելիքների կուռ ու ամբողջական համակարգ ստեղծելուն կամ ձեռքբերած գիտելիքների հիման վրա աշակերտների մեջ դրանց գործադրման կարողություններ ու հմտություններ մշակելուն: Իսկ այս ամենը միջառարկայական կապերի օգտագործման հիմնական նպատակներից մեկն է, ուստի, այդ նշանակում է նաև ցույց տալ, թե նյութերի միջև կայուն կապերի ստեղծումով ինչպես կարելի կլինի հասնել ավելի ընդհանրացված կապերի՝ տարբեր առարկաների միջև եղած փոխադարձ կապերի գիտակցմանն ու օգտագործմանը: Այլ կերպ ասած՝ դրանով ուսուցչին

կսովորեցնենք, թե ինչպես ծանոթից, մոտիկից ու կոնկրետից կարելի կլինի անցնել անծանոթին, ավելի հեռավորին ու ընդհանուրին:

Հետազոտական աշխատանքի նպատակն է վերլուծել մայրենի լեզվի տարրական դասընթացի ուսումնասիրման ընթացքում իրականացվող փոխադարձ կապերը, որոնք կարող են օրինակ դառնալ նաև այլ առարկաների կամ տարրական դասընթացի մյուս բաժինների ուսուցման ընթացքում նման կապերի կենսագործման համար:

Նպատակից ելնելով՝ առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել Հանրակրթության պետական չափորոշիչը,
- բացահայտել Մայրենիի 1-4-րդ դասարանների առարկայական ծրագիրն ու չափորոշիչը,
- բացահայտել կրթության բովանդակությունն արտացոլող փաստաթղթերում միջառարկայական կապեր ստեղծելու հնարավորությունները:

Հետազատության գործնական նշանակությունը պայմանավորված է աշակերտների բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության իրականացմամբ, ինչն այսօր դժվար է պատկերացնել առանց միջառարկայական կապերի օգտագործման, առանց երեխաների հետաքրքրությունների բարձրացման: Այն ամենից շատ ու ամենից արդյունավետ ձևով կարելի է իրականացնել մայրենի լեզվի դասերին, մայրենի լեզվի միջոցով, մայրենի լեզվի միջնորդությամբ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԿԱՊԸ ԵՎ ԱՅԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Շրջապատի աշխարհը մարդուն ներկայանում է իր դիալեկտիկական միասնության մեջ, փոխադարձ կապերով ու կախվածությամբ, պատճառահետևանքային առնչակցություններով: Ուսումնական գործընթացն աշխարհի ճանաչումն է իր այդ կապերի ու համար դարերի ընթացքում աշխարհի ճանաչման տարբեր համակարգեր են մշակվել, որոնց մեծ մասի հիմքում ընկած է եղել աշխարհը կամ շրջապատը մաս առ մաս կամ տարբեր կողմերից ճանաչելու սկզբունքը: Առարկայական ուսուցումը դրա լավագույն արտահայտությունն է և մինչև այժմ տիրապետող է ուսուցման գործընթացում:

Սակայն աստիճանաբար ավելի ու ավելի համոզիչ է դառնում այն փաստը, որ աշխարհի ուսումնասիրման ավանդական ձևն իրեն չի արդարացնում, որովհետև բազմաթիվ ու բազմապիսի գործընթացներ ու երևույթներ կան, որոնք անբաժանելի միասնություն են ներկայացնում, և դրանց բաղադրիչների առանձին ու անկախ ուսումնասիրությունը, միևնույնն է, ամբողջության մասին ճիշտ պատկերացում չի տալիս: Վերջին շրջանում առաջացած միջառարկայական կամ սահմանային գիտությունները՝ աստրոֆիզիկան, ֆիզիկական քիմիան, բիոնիկան և այլն, այս նոր սկզբունքի արտահայտությունն են:

Ուսուցման մեջ ևս այդ միասնության կամ փոխադարձ կապերի ապահովման պահանջը գնալով հույժ անհրաժեշտ խնդիր է դառնում, որի հիման վրա էլ ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի ապահովման նոր պահանջ ստեղծվեց: Միջառարկայական կապերի օգտագործումն ունի նաև մի այլ շատ կարևոր նշանակություն. այն վաղուց ստացած կամ արդեն ունեցած գիտելիքների փոխանցման, դրանք շրջանառության մեջ դնելու, տարբեր պայմաններում ճիշտ ու տեղին գործադրելու կարողություն է մշակում սովորողների մեջ, որը մարդու համար կարևոր ու գործնական հատկանիշ է դառնում նրա ամբողջ կյանքի համար:

Գիտելիքների փոխանցման և ներառարկայական կապերի ապահովման տեսակետից հատուկ ուշադրություն պետք է դարձնել միևնույն առարկայի տարբեր

տարիների դասընթացների կամ ամբողջական դասընթացի տարբեր հատվածների միջև փոխադարձ կապերի ապահովման վրա՝ որպես դասընթացի ամբողջացման, անցածը հիշելու և նորի հետ կապելու, սովորածը գործադրելու և գործածության ոլորտում պահելու անփոխարինելի միջոցի:

Ուսումնասիրվող նյութերի միջև առարկայական տրամաբանական բովանդակության, թեմատիկ, ճանաչողական, դաստիարակչական ու լեզվական կապերի ստեղծման աշխատանքը պետք է սկսել դեռևս մշակման համար ընտրված նյութի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցից և ավարտել նյութի, թեմայի կամ նյութերի թեմատիկ խմբի ամփոփումով, ընթացիկ, քառորդային ու տարեվերջյան կրկնություններով՝ յուրաքանչյուր տեղում իր չափով ու ձևով, ըստ անհրաժեշտության ու հնարավորության:

Եթե մեթոդապես արգելվում է զրույցի ընթացքում նոր նյութի բովանդակությանը դիմելը կամ այն ինչ-որ չափով շոշափելը, ապա արդեն ծանոթ նյութերին դիմելը ոչ միայն չի սահմանափակվում, այլև, ընդհակառակը, խրախուսվում է, որովհետև ծանոթ նյութի մասին խոսելիս իսկապես զրույցն ավելի ակտիվ, երկկողմանի բնույթ է ստանում, դառնում է լիարժեք: Արդեն անցած ու ծանոթ նյութերի օգտագործումը զրույցի ընթացքում աշակերտներին հնարավորություն է տալիս ակտիվորեն մասնակցելու նոր նյութի ուսումնասիրման նախապատրաստմանը, հարցեր տալ, պատասխանել առաջադրված հարցերին, լրացումներ ու եզրակացություններ անել, փաստեր ու օրինակներ բերել, մտնել ուսումնասիրվող թեմայի ոլորտը, տարբեր կողմերից ծանոթանալ նրան:

Ուսումնասիրվող նյութերի միջև սերտ կապեր ու փոխկապակցություններ ստեղծելու կարևոր ձևերից մեկն էլ ընթացիկ կրկնություններն ու վերհիշումներն են, երբ առանձին - առանձին ուսումնասիրված նյութերը միմյանց հետ կապակցելու, մի ամբողջական կուռ համակարգ ձևավորելու համար նպաստավոր պայմաններ են ստեղծվում: Անցածի վերհիշումն ու կրկնությունը հնարավորություն են տալիս այդ նյութերի միջև որոշակի հաջորդականություն ստեղծել, երբեմն ժամանակի, երբեմն գիտական համակարգի, երբեմն տրամաբանական կամ մի այլ հիմքով: Անցածի կրկնությունը մերթ պարզ վերհիշման բնույթ է կրում, երբ գործ ունենք ընթացիկ

կրկնության հետ, մերթ էլ՝ անցածը համակարգի բերելու՝ տարբեր նյութերի միջև կապեր ու առնչակցություններ հայտնաբերելիս:

Այսպիսի աշխատանքի համար առանձնապես նպաստավոր պայմաններ են ստեղծվում թեմաների ամփոփման կամ ընդհանրացման ժամանակ, երբ թեմայի կամ թեմատիկ խմբի մեջ մտնող առանձին նյութերը միմյանց հետ կապակցելու, դրանք մի ընդհանուր համակարգի մեջ միավորելու աշխատանք է կատարվում: Այս դեպքում միանգամայն դրական աշխատանք կարելի է կատարել հատկապես ընդհանրացնող գծապատկերների, գծային մոդելների, ցուցափեղկերի, ալբոմների ու այլ կարգի ընդհանրացնող նյութերի օգտագործման շնորհիվ, որոնք նյութերի միջև եղած կապերն ու փոխակապակցությունները ցույց են տալիս հատուկ գրաֆիկական միջոցներով կամ բովանդակությունը ներկայացնող նկարներով ու պլակատներով:

Ամենևին պատահական չէ, որ ուսումնական աշխատանքի այս փուլում աշակերտները կարողանում են ամբողջ թեմայի կամ դասընթացի որևէ բաժնի ընդհանրացնող գծապատկերը կամ կառուցվածքի ու փոխկապակցվածության գծային մոդելը կազմել: Ասենք, ցույց տալ, թե <<Գոյական>>, <<Բայ>>, <<Թվական>> կամ <<Նախադասություն>> թեմաների բովանդակությունը, կառուցվածքը, բաղադրամասերի կապն ու փոխակապակցությունն ինչպիսին է և ինչ պատկեր կունենա, եթե դա արտահայտելու լինենք գծերով, վանդակներով կամ շրջաններով:

Այլ գիտությունների տվյալների օգտագործումը ուսուցման գործընթացում

Միջառարկայական կապերի հիմնահարցը նոր չէ. սխալված չենք լինի, եթե ասենք, որ այն նույնքան հին է, որքան ինքը՝ առարկայական ուսուցումը: Այլ բան է, թե տարբեր ժամանակներում ինչ տեսանկյունով է քննարկվել այդ հիմնահարցը կամ ինչ նպատակով են օգտագործվել միջառարկայական կապերը:

Դասական մանկավարժության մեջ միջառարկայական կապերի գաղափարը ծնվեց ուսումնական նյութի բովանդակության մեջ բնության ամբողջականությունը արտացոլելու ուղիների որոնման ընթացքում:

Դեռևս 1657թ. իր աշխատություններում մեծ դիդակտ Յան Ամոս Կոմենսկին դիդակտիկական առումով անդրադարձել է միջառարկայական կապերին, նշել, որ բնության մեջ առարկաներն ու երևույթները գտնվում են փոխադարձ կապերի մեջ:

<<Այն ամենը, ինչ գտնվում է փոխադարձ կապի մեջ, պետք է ուսուցանվի հենց այդ կապերի հետ փոխկապացված ձևով>>,- նշել է Կոմենսկին[1]:

Տարբեր գիտություններին կամ առարկաներին, նրանց կապերին դիմելը Կոմենսկին համարում էր «գիտություններից մեծ հարստություն ձեռք բերելու լավագույն միջոց: Նա գնաց դեպի գիտելիքների բազմակողմանի ընդհանրացումը, նրանց փոխադարձ կապերին, առանց որի անհնար է պատճառ-հետևանքային կապերի գիտակցումը և օբյեկտիվ աշխարհի իրերի և երևույթների հարաբերությունները հասկանալը: Կոմենսկին հասկանում էր, թե որքան կարևոր է ստեղծել կապեր ուսումնական առարկաների միջև, որպեսզի սովորողների մոտ ձևավորվեն գիտելիքների համակարգեր և ապահովվի ուսուցման գործընթացի ամբողջությունը:

Այս գաղափարին են անդրադարձել հետագայում շատ մանկավարժներ, զարգացրել և հարստացրել այն:

Այսպես, գիտելիքների ընդհանրացման գաղափարը որպես «ճշմարտությունը գտնելու» մեթոդ Ջոն Լոկի մոտ զուգակցվում է կրթության բովանդակության որոշման հետ, որտեղ մի առարկան, նրա հաստատմամբ, պետք է ամբողջացվի մյուսի տարրերով ու փաստերով:

Շվեյցարացի ականավոր մանկավարժ Ի.Հ.Պեստալոցին ոչ միայն իր մանկավարժական-մեթոդական աշխատություններում շոշափեց միջառարկայական կապերի պրոբլեմը, այլև մանկավարժական պրակտիկայում փորձեց կենսագործել ուսումնական առարկաների միջև գոյություն ունեցող կապերը: Լինելով մի շարք առարկաների գծով տարրական ուսուցման մեթոդիկայի հիմանդիրը՝ Պեստալոցին տարրական ուսուցման հիմքում դրեց իրար հետ սերտորեն կապված երեք տարր.

- ձևը
- թիվը

[1] Կոմենսկի Յա. Ա., Մեծ դիդակտիկա,Երևան,1962, էջ 87:

- անունը

Նա մշակեց մայրենի լեզվի, թվաբանության, նկարչության, աշխարհագրության և այլ առարկաների ուսուցման ժամանակ միջառարկայական կապերից օգտվելու մի շարք արդյունավետ հնարներ ու ձևեր:

Պեստալոցին, պրոպագանդելով զարգացնող ուսուցման գաղափարը, դիդակտիկական հսկայական նյութի վրա բացահայտեց ուսումնական առարկաների միջև բազմատեսակ փոխադարձ կապեր: Նա պահանջում էր.«Գիտակցել իրար հետ փոխադարձ կապված բոլոր առարկաների միջև եղած հատկապես այն կապերը, ինչ կապերի մեջ որ նրանք բնության մեջ իրականում գտնվում են»:

Միջառարկայական կապերի պրոբլեմը հոգեբանորեն հիմնավորելու առաջին փորձը կատարեց գերմանացի հոգեբան-մանկավարժ Ի.Ֆ. Հերբարտը: Նա գտնում էր, որ բազմակողմանի զարգացած մարդ դաստիարակելու համար պետք է հաճախակի դիմել տարբեր գիտությունների և ուսումնական առարկաների միջև առկա կապերին, որը միաժամանակ կզարգացնի աշակերտների հետաքրքրությունները:

Միջառարկայական կապերի հիմնահարցը դիդակտիկական առումով իր գիտամանակավարժական հիմնավորումը գտավ գերմանացի ականավոր մանկավարժ Ա. Դիստերվեգի աշխատություններում: Ինքը՝ Դիստերվեգը գրում էր, որ իր <<Ձեռնարկ՝ դպրոցական քրեստոմատիկայից օգտվելու համար>> գրքի հիմքում դրված է միջառարկայական կապերից արդյունավետ օգտվելու գաղափարը: Նա առանձնապես շեշտում է մայրենի լեզվի միջառարկայական կապերի կրթադաստիարակչական դերն ու նշանակությունը:

Դասական մանկավարժության մեջ միջառարկայական կապերի դիդակտիկական նշանակության առավել ամբողջական հոգեբանամանկավարժական հիմնավորումը տվել է Կ.Դ. Ուշինսկին: Իր դիդակտիկական–մեթոդական աշխատություններում նա միաժամանակ տվել է մի շարք միջառարկայական կապերի օգտագործման ձևեր ու մեթոդներ: Օրինակ, իր <<Մայրենի լեզվի>> մեթոդական ուղեցույցում նա խորհուրդ է տալիս աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար կազմակերպվող զրույցների ժամանակ հաճախակի դիմել բնագիտական առարկաներին, քանի որ այդ առարկաները դիտողական են և գտնվում են փոխադարձ կապերի մեջ:

Ուշինսկին մեծ ավանդ է ունեցել նաև միջառարկայական կապերի մեթոդական մշակման մեջ, ինչով զբաղվել են շատ մանկավարժներ: Մեթոդական պահանջների շարքում առավել գործուն են հետևյալները. <<այլ առարկաների գիտելիքների վրա հենվելը՝ նյութը բացատրելիս, կրկնության ժամանակ առանձին բաժինների բովանդակությունների հաջորդականություն, մի շարք առարկաների համար ընդհանուր գիտական մտքերի ու ճանաչողական կարողությունների զարգացում >>:

Գիտությունների, ուսումնական առարկաների փոխկապակցվածության և դրանց փոխկապակցված ուսուցման մասին արժեքավոր դրույթներ են զարգացրել նաև անցյալի հայ ականավոր մանկավարժները: Օրինակ, Խաչատուր Աբովյանը իր մանկավարժական աշխատություններում բազմիցս խոսում է մի շարք առարկաների միջև առկա կապերի ու դրանց օգտագործման մասին: Նախ նշենք, որ Աբովյանն էլ Դիստերվեգի նման դեմ էր տարբեր գիտությունները և ուսումնական առարկաները համատեղ, միևնույն դասաժամին անցնելու ունիվերսալ մեթոդին: Այդ սկզբունքով էլ մանկավարժական պրակտիկայում Աբովյանը խելամտորեն օգտագործում է հայոց լեզվի, գրականության, պատմության, աշխարհագրության, բնագիտության և մյուս առարկաների միջև առկա կապերը:

Բարձր գնահատելով լեզուների դասավանդման ընթացքում միջառարկայական կապերի դերը, Աբովյանը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում հատկապես մայրենի լեզվի և ռուսաց լեզվի դասավանդման համեմատական մեթոդին, որի ժամանակ «փորձված ուսուցիչը ի մի բերելով երկու լեզուների միատեսակ կանոնները և ընդհանուր հատկությունները, կրկնակի հեշտացնում է իր աշակերտների աշխատանքը և նրանց արագ քայլերով տանում դեպի երկու լեզուների ուսումնասիրությունը»:

Անցյալի առաջատար մեթոդիստ - մանկավարժները գտնում էին, որ ուսուցչի կրթվածության չափանիշը, տարբեր գիտությունների միջև կապեր ստեղծելու ընդունակությունները կարող են լինել նրա ուսուցանելու պատրաստակամությունը, ուսումնական առարկաների բաժիններին կից զուգահեռներ անցկացնելը, որոնք բովանդակությամբ կապված են այն առարկայի հետ , որը նա դասավանդում է:

Միջառարկայական կապերի դրսևորումները տարրական դասարանների մայրենի լեզվի դասերին

Մայրենի լեզվի դասերին միջառարկայական կապերի գործադրման երեք կարևոր եղանակներ կան[2]:

1. Առաջինը ուսուցման գործընթացում անդրադարձ կապերի օգտագործումն է, որն ամենից առաջ կապվում է ներառարկայական կապերի ճիշտ ու տեղին օգտագործման հետ: Այն ինչ աշակերտներն անցել են նախորդ դասերին կամ ուսման նախորդ տարիներին, հետևողականորեն պետք է կրկնվի, ամրապնդվի, դառնա կարողություն,հիմք ծառայի նորի յուրացման համար և կապվի նորի հետ:
2. Մյուս կարևոր եղանակը ձեռքբերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումն է ուսուցման գործընթացում: Բազմաթիվ գիտելիքներ ու կարողություններ, որոնք երեխան ձեռք է բերել առաջ, պետք է հմտորեն օգտագործել ուսուցման գործընթացում:
3. Երրորդ ձևը այլ գիտությունների տվյալների կիրառությունն է, որը նույնպես լայնորեն կարող է գործադրվել ուսուցման գործընթացում:

Եթե ուսուցիչը ցանկանում է իր պարապած մայրենիի դասը լիարժեք ու նպատակային լինի, կամա թե ակամա պետք է դիմի տարբեր գիտությունների տվյալների ու փաստերի օգտագործմանը, որպեսզի դասը հետաքրքրական, ուսանելի ու դաստիարակչական դառնա:

Նկարը և նկարչությունը տարրական դասարանների մայրենի լեզվի դասերին

Նկարը տարրական դասարանների բոլոր դասագրքերի կարևոր ու առանձնահատուկ բաղադրիչներից մեկն է: Նկարները լայնորեն օգտագործվում են ինչպես այբբենարաններում, որոնց ծավալի ճնշող մեծամասնությունը կազմում են նկարները, այնպես էլ լեզվի ընթերցարաններում ու լեզվի դասագրքերում, որոնցում նույնպես նկարները վճռական տեղ ու դեր ունեն: Դասագրքերում օգտագործվող

[2] Տեր-Գրիգորյան Ա. Ե., Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին, Երևան 1986թ.:

նկարները լինում են երեք տեսակ՝ առարկայական կամ նկար-բառեր, նկար-նախադասություններ և թեմատիկ նկարներ կամ նկար-պատմություններ:

Այբբենարաններում նկարները հիմնականում ուսուցվելիք նյութի հաղորդման ֆունկցիա ունեն, դրանք կարևոր ու անփոխարինելի միջոց են ուսուցողական ու դաստիարակչական նյութի առաջադրման համար,քանի որ բառերով այդ ամենը հաղորդելու հնարավորություն չկա:

Բավականաչափ շատ նկարներ կան օգտագործված նաև մայրենիի ընթերցարաններում: Յուրաքանչյուր անգամ ուսուցիչը իր համար պետք է պարզի տվյալ նկարի հիմնական նպատակը և ապա նոր անցնի ուսուցման գործընթացում դրա օգտագործմանը, որպեսզի այն օրգանապես ձուլվի այդ գործընթացի հետ, դառնա նրա բաղադրամասը և ոչ թե ավելորդ ու անտեղի կցորդ:

Տարրական դասարանների մայրենիի ընթերցարաններում որոշակի նյութեր կան նաև կերպարվեստի հայ նշանավոր գործիչների՝ Գ. Բաշինջաղյանի, Հ. Այվազովսկու, Մ. Սարյանի մասին: Այս նյութերն ուսումնասիրելիս պետք է տեղեկություններ տալ ոչ միայն արվեստի այդ խոշոր,աշխարհահռչակ գործիչների, այլև դեպի արվեստի անսպառ ու անսահման աշխարհը տանող կերպարվեստի ինքնատիպ ճանապարհի մասին:

Պատմական գիտելիքների օգտագործումը մայրենի լեզվի դասին

Պատմական տարրական գիտելիքների հաղորդումը, կամ պատմության ու մայրենի լեզվի միջառարկայական կապերի ապահովումը հիմնականում նպատակ ունի երեխաների միջև ճիշտ ձևավորելու ժամանակի ըմբռնումը՝ մի բան, որը ուսուցման հիմնական նպատակներից մեկն է: Դասագրքերում եղած բոլոր այն նյութերը, որոնք պատմական բնույթի են, կամ պատմական հենք ունեն, պետք է մատուցել ժամանակաշրջանի մասին ճիշտ պատկերացում տալով, ամենից առաջ գործողությունների պատմական ժամանակաշրջանը ներկայացնելով, որպեսզի այսօրվա տանկերի, հրթիռների, գերձայնային ռազմական ինքնաթիռների ու այլ ահավոր զենքերի դարում ապրող երեխայի համար Հայկ Նահապետի նետ ու աղեղով կռվելը, Վ. Մամիկոնյանի ու նրա զորքերի հերոսական ու անձնազոհ պայքարը պարսկական փղերի դեմ, Խոյ Հակոբի խոյի մորթու մեջ մտնելով ծպտված թշնամու

բանակատեղին թափանցելը հասկանալի դառնան երեխաների համար, միամիտ ու անհեթեթ չինչեն:

Բնությունն ու բնագիտությունը մայրենիի դասերին

Բնությունն ու բնագիտական հասկացությունները, որպես ճանաչողական ու դաստիարակչական տեսակետից ընկած են ընթերցանության նյութերի թեմատիկ խմբավորումների հիմքում և տարբեր անվանումներով ու ձևակերպումներով կան գրեթե բոլոր դասարանների դասագրքերում: Այդ դասերը հնարավորություն են տալիս երեխաներին կապել բնության հետ, զգալ տալ բնության անկրկնելի գեղեցկությունները, հաղորդակցվել գեղեցիկի հետ: Բնությանը վերաբերվող նյութերի ուսումնասիրությունը պետք է անպայման կապվի բնության հետ՝ ամենից առաջ կենդանի բնության դիտման, բնության հետ անմիջական շփման ձևով, իսկ ապա ֆիլմերի ու նկարների ցուցադրման միջոցով:

Երգն ու երաժշտությունը տարրական դասարանների մայրենի լեզվի դասերին

Դեպի գեղեցիկի աշխարհը երեխաների համար ճանապարհ պետք է հարթել բոլոր միջոցներով: Այդ միջոցներից մեկն էլ երգն ու երաժշտությունն են, որոնք լայնորեն կարող են օգտագործվել մայրենի լեզվի դասերին, այն դարձնել հաճելի, գեղեցիկ, տպավորիչ ու անմոռաց: Դասին երգն ու երաժշտությունը կարող է օգտագործվել որպես ուսումնասիրվող նյութի համար ընդհանուր ֆոն կամ հենք, որի վրա հետո պետք է ձևավորվի կոնկրետ հյուսվածքը: Կարող է կապվել նյութի հետ որպես նրա ընկալման ու յուրացման օժանդակ միջոց, որը կօգնի ավելի հեշտ ըմբռնելու հոդվածը: Օրվա դասերը երաժշտությամբ ամփոփելը կամ ավարտելը նույնպես բացառիկ կարևոր նշանակություն կարող է ունենալ ոչ միայն երեխաների հոգնածությունը ցրելու, նրանց աշխուժացնելու ու ակտիվացնելու, այլև ամրապնդելու տեսակետից:

Խոսքարվեստը տարրական դասարանների մայրենի լեզվի դասերին

Խոսքարվեստի կրթադաստիարակչական այդ մեծ ու անսպառ հնարավորության օգտագործման անհրաժեշտ ու մատչելի ձևը գեղարվեստական ընթերցումն է: Ընթերցումից պարզ կարող է երևալ, թե նրանք ինչպես են հասկացել նյութը, ինչպես են այն վերակենդանացնում, ինչ հույզեր, ապրումներ զգացմունքներ են դնում իրենց կարդացածի մեջ: Դասերին լայնորեն օգտագործվում է նաև անգիր արտասանությունը

կամ գեղարվեստական արտասանությունը, պատմումը: Վերջինս իր որոշակի տեղն ու դերն ունի ընթերցանության յուրաքանչյուր դասում: Հիմնական նպատակներից մեկն էլ աշակերտների բանավոր խոսքի զարգացումն է՝ պատմելու, խոսք կառուցելու կարողության ձևավորումը: Հեքիաթը խոսքարվեստի այն ամենաառաջին ու ամենամատչելի ձևերից մեկն է, որին երեխան հաղորդակցվում է վաղ մանկական տարիքից: Այդ հեքիաթներից շատերը ուսուցիչը ոչ թե կարդալու, այլ բանավոր վերարտադրելու միջոցով պետք է մատուցի՝ օգտագործելով ժողովրդական հեքիաթասացության տարրերը՝ իր խոսքը բարձրացնելով խոսքարվեստի մակարդակի:

Թատերական արվեստի տարրերի օգտագործումը մայրենի լեզվի դասերին

Դերերով կարդալը թատերական արվեստի տարրերից ամենապարզն ու մատչելին է: Դերերով կարդալու ժամանակ աշակերտը մտնում է իր դերի մեջ, ավելի լավ է պատկերացնում իր կարդացածը և ձգտում է ձայնով, կարդալու եղանակով ճիշտ վերարտադրել տվյալ գործող անձի հոգեվիճակը, թափանցել դերի էության մեջ: Այս աշխատանքը որոշակի հաճույք է պատճառում երեխաներին, բարելավում է կարդալու տեխնիկան: Անգիր արված նյութը դերերով արտասանելիս աշակերտները մտովի մտնում են իրենց դերի մեջ, իրենց խոսքը, շարժումները, հարց ու պատասխանը համապատասխանեցնում են մյուսների խոսքին ու շարժումներին: Գործադրելի է բեմականացումը՝ հատկապես թեմատիկ խմբի նյութերի ամփոփման դասերին: Այն միանգամայն դրականորեն կազդի նյութի յուրացման, երեխաների ճանաչողության սահմանների ընդարձակման, նրանց համակողմանի դաստիարակության վրա:

Տեխնիկան ու տեխնիկական գիտելիքները մայրենի լեզվի դասերին

Մայրենի լեզվի դասերին գիտատեխնիկական ինֆորմացիայի կարիքն ամեն օր ու ամեն վայրկյան կարող է ծագել. դա ժամանակի պահանջն է ոչ միայն դասի բովանդակությունն ապահովելու, այլև միջառարկայական կապերի պահպանման առումով: Զուտ մայրենի լեզվի դաս չկա և չի կարող լինել, այն բազմաբնույթ, բազմակողմանիորեն հագեցած, հարուստ ու բազմաբովանդակ դաս պետք է լինի, և ուսուցիչը պետք է լավ պատրաստված լինի այդպիսի աշխատանք տանելու համար:

Մենք ապրում ենք գիտության և տեխնիկայի զարգացման ժամանակներում, ուստի պետք է քայլենք ժամանակին համընթաց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավարտելով հետազոտական աշխատանքը՝ հանգել են հետևյալ եզրակացությունների.

- Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան՝ այսօր մեծանում է ուսումնական առարկաների միջև կապերի բացահայտման դերն ու նշանակությունը, ինչի ճիշտ և խելացի կազմակերպելու դեպքում կհարստանան և կընդլայնվեն սովորողների գիտելիքները:
- Ժամանակակից գիտության բոլոր ճյուղերը սերտորեն կապված են, և դա պետք է արտահայտվի նաև դասավանդման ընթացքում:
- Տարրական դպրոցի առջև դրված կարևոր խնդիրներից մեկը սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների ու հմտությունների զարգացումն է, որում մեծ ներդրում կարող է ունենալ դասվարը:
- Միջառարակայական կապերի կիրառումը թույլ կտա սովորողներին ընդհանուր ուսումնական կարողություններից զատ հետագա կյանքում գիտելիքների ձեռքբերման, դրանք կենցաղում, անծանոթ իրավիճակներում կիրառելու համար: Այսինքն, աշակերտի ձեռք բերած գիտելիքները պետք է ծառայեն կյանքի ծանոթ և անծանոթ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելուն: Դրա համար ցանկացած ուսուցիչ պետք է իմանա սովորողին ներկայացվող ընդհանրական պահանջների համակարգը ըստ Հանրակրթության պետական չափորոշչի:
- Միջառարկայական կապերի իրագործումը նպաստում է գիտելիքների խոր և բազմակողմանի յուրացմանը, գիտական հասկացությունների և օրենքների ձևավորմանը, ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործմանը և նրա օպտիմալ կազմակերպմանը, գիտական աշխարհայացքի ձևավորմանը, նյութական աշխարհի ընդհանրացմանը, բնության և հասարակության մեջ երևույթները փոխկապվածության մեջ ընկալելուն:
- Միջառարկայական կապերի իրագործումը հնարավորություն է ստեղծում սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների և հմտությունների ձևավորման համար ստեղծելու նպաստավոր պայմաններ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կոմենսկի Յա. Ա., Մեծ դիդակտիկա, Երևան, 1962:
2. Հանրակրթության պետական չափորոշիչ (գործող), https://e-gov.am/u_files/file/decrees/kar/2011/07/11_1088.pdf:
3. Հանրակրթության պետական չափորոշիչ (նոր), 09.02.2021թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788:
4. Մայրենիի նոր չափորոշիչ, https://escs.am/files/files/2021-05-06/1d10dc19d7adbb902d7a2ee54481cbc8.pdf:
5. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին, Երևան 1986թ.: